

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ՄԻ ԲԱՆԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ

Հայ եկեղեցու սպասավորների կոչումներն ըստ հոգևոր աստիճանակարգի՝ նվիրապետության, դասակարգվում են հետևյալ կերպ՝ դպիր, սարկավագ, քահանա (աբեղա), վարդապետ, եպիսկոպոս, արքեպիսկոպոս, կաթողիկոս:

Եկեղեցու նվիրապետության մեջ ընդունված է ինը կարգ՝ դոնապանություն, ընթերցողություն, երգմանեցուցչություն, ջահընկալություն, կիսասարկավագություն, սարկավագություն, քահանայություն, եպիսկոպոսություն, կաթողիկոսություն: Առաջին չորս կարգերը կոչվում են դպրության աստիճաններ: Վերոհիշյալ տերմինների մեծ մասը հնագույն փոխառություն է հունարենից, պարսկերենից կամ ասորերենից:

Դպիր բառը փոխառություն է պահլավերեն *dipir* ձևից, որ նշանակում էր «քարտուղար, գրագիր»: Ըստ Հ. Աճառյանի՝ բառի արմատը՝ *dipi* (գրություն, արձանագրություն) բնիկ իրանական չէ, այլ թերևս սեմական փոխառություն է¹:

Հին եբրայեցիների մոտ դպիր էին կոչվում գրելու և հաշվելու մեջ վարժ անձինք, որ թագավորի հրամանները ժողովրդին էին հաղորդում: Օրինակ՝ «... յինէն ի Մաքիր իջին խուզարկուք, եւ ի Զարուղոնէ զօրացուցիչք՝ գաւազանաւ պատմութեան դպրի» (Դատ. Ե, 14): Նոր Կտակարանի մեջ հիշված դպիրները մարդիկ էին, որոնք Սուրբ Գրքերը պահում և սովորեցնում էին: Նրանք ընդօրինակում էին Սուրբ Գրքերը և բացատրում դրանց միջին տեղերը, խորհուրդներ տալիս արարողությունների վերաբերյալ: Օրինակ՝ «Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս եւ զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ թէ ուր ծնանիցի Քրիստոսն» (Մատթ. Բ, 4): Նույն անձինք, որ դպիր էին կոչվում մի ավետարանի մեջ, այլ ավետարանների համապատասխանող համարների մեջ կոչվում են օրինական կամ վարդապետ օրինաց: Օրինակ՝ «Վարդապետ, որ պատուիրանն է մեծ յօրէնս» (Մատթ. Իբ, 37, Մարկ. Իբ, 28): Դպիր բառը գործածվում է նաև իմաստով՝ հայտնի անձանց համար: Օրինակ՝ «Ու՞ր իմաստուն, ու՞ր դպիր, ու՞ր քննիչ աշխարհիս այսօրիկ» (Ա. Կորնթ. Ա, 20): «Աստուածաշունչ, մատեան Հին և Նոր կտակարանների»² արևելահայերեն նոր թարգմանության մեջ՝ դպիր բառի փոխարեն գործածված է օրենսագետ բառը:

¹ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. 1-4, Երևան, 1971-1979:

² Աստուածաշունչ, մատեան Հին և Նոր կտակարանների (արևելահայերեն նոր թարգմանություն). Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1999:

Այնինչ 1873 թ. հրատարակված Աստվածաշնչում³ գրված է. «Ու երբոր Յիսուս լըմնցուց աս խօսքերը, ժողովուրդները կը զարմանային անոր վարդապետութեանը վրայ. ինչո՞ւ որ իշխանութիւն ունեցողի մը սլէս կը սորվեցնէր անոնց՝ ու չէ թէ դպիրներուն պէս» (Մատթ. է, 29): Նույն նախադասութիւնը նոր թարգմանութեան մեջ ձևակերպված է հետևյալ կերպ. «Երբ Հիսուս այս բոլոր խոսքերն ավարտեց, ժողովուրդը զարմանում էր նրա վարդապետութեան վրա. որովհետև ուսուցանում էր ինչպես մեկը, որ հեղինակութիւն ունի և ոչ թե ինչպես օրենսգետները» (Մատթ. է, 29): Մեկ այլ օրինակ՝ «Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի դպրացն եւ ի փարիսեցոց եւ ասեն, վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ի քէն» (Մատթ. ԺԲ, 38): «Այն ժամանակ օրենսգետներից ու փարիսեցիներից ոմանք նրան պատասխան տվեցին և ասացին. «Վարդապետ, քեզինց մի նշան ենք կամենում տեսնել» (1999 թ.): Քանի որ գալիւ բառը «հրէից մէջ օրէնսգէտ մարդ էր»⁴, օրենքները ժողովրդին բացատրող անձ, ուստի այդ բառը թարգմանվել է օրենսգետ: Օրինականները այն մարդիկ էին, որոնք սովորեցնում էին հրեական օրենքները, «մանավանդ ավանդական կամ բերանացի օրէնքը»: Հրեաները Հին Կտակարանը բաժանում են երեք մասի՝ Օրենքներ, Մարգարեներ և Սուրբ մատյաններ: «Օրէնք կոչուած մասը կը պարունակէր «Հնգամատեանը», այսինքն՝ Մովսէսի Հինգ գրքերը: Հավանաբար, «Հնգամատեանն» էր օրենքը, որից յուրաքանչյուր թագավոր պարտավոր էր դրել տալ և սովորել, որ հարկավոր էր ծանոթացնել երիտասարդներին ու ծերերին, հրապարակավ և առանձին»⁵: Օրինակ՝ «Մովսէսը գրում է այն արդարութեան մասին, որ օրէնքից է» (Հռոմ. Ժ, 5): Այսպիսով, դպիր, օրենսգետ, օրինական և վարդապետ օրինաց բառերը որոշ առումով կարելի է համարել հոմանիշներ: Դպիր բառը գրականից է անցել բարբառներին՝ (հմտ. Երևան՝ տպիր, Մուշ՝ գրիւր, Մարաղա՝ տըպեր, Սեբաստիա՝ թըրի):

Սարկավագ բառը ստուգաբանված չէ: Նշանակում է՝ 1. Սպասավոր, ծառա: 2. Եկեղեցական պաշտոնյա, որ սպասավորում է պատարագին:

Այս բառը Ստ. Մալխասյանցը բացատրում է հետևյալ կերպ՝ 1. Սպասավոր, ծառա: 2. (եկեղ.) Առաքյալների ժամանակ քրիստոնյա համայնքի տնտեսական գործերը կառավարող պաշտոնյա: 3. Ներկայումս՝ եկեղեցական պաշտոնյա, քահանայից կրտսեր, որ եկեղեցում սպասավորութիւն է կատարում, աղոթքներ անում, ավետարանը կարդում, խնկարկում, հատկապես սպասավորում է քահանային պատարագի ժամանակ⁷: «Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցին ձեր ծառայ» (Մատթ. Ի, 26): «Նմանապէս և սարկաւագները թող լինեն պարկեշտ, ոչ երկդիմի խօսող, ոչ գինեսէր, ոչ շահասէր, այլ թող պահեն հաւաստի խորհուրդը մաքուր խղճով»: (Ա. Տիմոթ. Գ, Դ): Սարկավագները լինում են երկու կարգի՝ կիսասարկա-

³ Աստուածաշունչ, Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց (եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած). Կ. Պոլիս, 1873:

⁴ Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ). հ. 1-4, Երևան, 1944-1945:

⁵ Բառարան Սուրբ Գրոց (այսուհետև՝ ԲՍԳ). Կոստանդնուպոլիս, 1881, էջ 586:

⁶ Նույն տեղում:

⁷ ՀԲԲ, հ. 4:

վագ և ավագ սարկավագ: Սարկավագը ուսի վրա կրում է ուրար իբրև նշան իր սպասավորությունը⁸: Սուրբ Ստեփանոս Նախավկային հաճախ անվանում է նաև Նախասարկավագ: Օրինակ «Սուրբ Ստեփանոս Նախասարկավագը Վրլիստոսի համար նահատակված առաջին անձն է»⁹: Սարկավագ բառից կազմված են սարկավագանոց, սարկավագատուն, սարկավագարան, սարկավագուհի (կուլյս, որ եկեղեցում սարկավագություն է անում. եկեղեցական օրենքներով կինը կարող է սարկավագուհի ձեռնադրվել, բայց քահանա ոչ) բարդ և ածանցավոր բառերը, նաև սարկավագել բայը: Բարբառներում բառը հանդես է գալիս հետևյալ հնչյունական տարբերակներով՝ սարկավաքյ (Վան), սՄրկՄվաքյ (Մոկս), սՄրգՄվՄք (Տիգրանակերտ), սրկավաք (Ղարաբաղ), սարգավաք, սարգեվաք (Մուշ), սայգավօյք, սարգավորք (Ջեյթուն):

Սարկավագ բառի հունարեն համարժեքը գիսկոն բառն է, որ գործածված է Ներսես Լամբրոնացու «Խորհրդածություն ի կարգ եկեղեցույ և Մեկնութիւն խորհրդոյ պաաարադին» երկում (հղումն ըստ ՆՀԲ-ի): Դիսկոն բառից կազմված է արքիդիսկոն «ավագ սարկավագ», որ մեկ անգամ գործածված է Փավստոս Բուզանդի Պատմության մեջ: Այսպես, «... եւ զիւր արքիդիսկոնն եպիսկոպոսին, որում անուն Մուրիկ կոչէր»¹⁰: Ստ. Մալխասյանցը այս նախադասությունը թարգմանել է հետևյալ կերպ. «Ներսես մեծ եպիսկոպոսն էլ իր կողմից ուղարկեց իր աթոռակից նազին և իր եպիսկոպոսական ավագ Մուրիկ անունով սարկավագին»¹¹: Սարկավագ բառն ունի հետևյալ բացատրությունը. «Այն, որ կր կատարէ աստուածային պաշտօն հրապարակաւ, և կ'ընէ մանաւանդ քառութիւն մեղաց, մարդոց մէջէն առնուած մարդոց համար կը կենայ Աստուծոյ կողմը, որ պատարադներ ու զոհեր մատուցանէ մեղքերու համար»¹²:

Քահանայական իշխանությունը ստորակարգվում է հետևյալ կերպ.

- կուսակրոն քահանա ամուսնացյալ քահանա չուչտակ
1. արեղա
 2. վարդապետ
 3. եպիսկոպոս
 4. արքեպիսկոպոս

Քահանա բառը փոխառություն է ասորերեն kahnā ձևից. բուն արմատը համարվում է kvā «ոտքի վրա կանգնել, ծառայել (Աստուծոյ)»: Սեմական մյուս լեզուներում ևս հանդիպում է՝ եբր. kōhên, արաբ. Kahin, որ նշանակում է «հմայող, կախարհ, բախտադուշակ, տնտես»¹³: Բառն ավանդված է

⁸ Ուրարը (եկեղ.) երկար ժապավենաձև կտոր է, որ կրում են սարկավագները ձախ ուսի վրա՝ սպասավորություն կատարելիս: Ուրար տալիս են հատուկ օրհնություններ: Ուրարակիրը դպիրից բարձր է, սարկավագից կրտսեր:

⁹ Ջ ա Ր Ե Հ արեղա Կ ա բ ա ղ յ ա ն. Նահատակություն և անմահություն Ստեփանոս Նախավկայի. Ս. էջմիածին, 1997, էջ 5:

¹⁰ Փ. Բուզանդացու Պատմություն հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 105:

¹¹ Փ. Բ ու ղ ա ն դ. Պատմություն հայոց (Ստ. Մալխասյանցի թարգմանություն). Երևան 1968, էջ 169:

¹² ԲՄԳ, էջ 564:

¹³ ՀԱԲ, հ. 4:

V դ.: «Քաճանայ ոչ երբէք անուանի՝ եթէ ոչ ժողովուրդ գուցէ նորա»¹⁴: «Զոր ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել...և ոչ զկանայս առ քաճանայս ունել»¹⁵: Քաճանան, ըստ հին հրեաների, 1. Ղևտական ցեղից ընտրված անձ էր, որ կատարում էր բոլոր կրոնական արարողությունները: 2. Քրիստոնեական եկեղեցիներում եկեղեցական պաշտոնյա, որ կատարում էր բոլոր կարգերը՝ բացի ձեռնադրությունից¹⁶: Օրինակ՝ «Երբ կրմտնիք այն երկիրը, որ ես տալու եմ ձեզ, և կհնձեք նրա հունձը, առաջին խուրձը՝ ձեր հնձի բերքը, կը բերեք քաճանային» (Ղեւտ. 23, 10): «Քաճանայից գործն էր գոհերու մատակարարութեան և տաճարին սպասաւորութեան հետ միանգամայն ժողովրդեան դաստիարակութեան հող տանել և անոնց դատերը տեսնել, ինչպէս նաև քննել բորոտութեան տեսակները, կին արձակելու դատերը, նախանձաւորութեան ջուրերն, ուխտեր, օրինաց և անմաքրութեան պատճառներն, այլովքն հանդերձ»: Հայերենի ժողովրդախոսակցական տարբերակներում անվանվում է նաև տերտեր, երեց, տեր, պապ, ագեր: Կան չ ժխտականով կազմված ձևեր՝ չքաճանայ, չքաճանայապետ, չերէց, նաև՝ տերա, դերա ձևերը, որոնք տրվում են անարժան քաճանաներին: Օրինակ՝ «Այդ ամբարիշտ ու չքաճանայապետ Յասոնն այնպէս եռանդազին աշխատեց, որ նրա ծայրայեղ մոլորութեան պատճառով այլազգութեան ու հեթանոսութեան սկիզբ դրուեց» (Բ. Մակ. Դ, 13):

Բարբառներում հանդիպում են հետևյալ հնչյունական զուգաբանությունները՝ քաճանա (Տիգրանակերտ), քահնո, քահննո (Զեյթուն), գաճա՛նա (Թբիլիսի), գա՛հանա (Խարբերդ), քյմխոնա (Մոկս): Ոչ կուսակրոն քաճանան կարող էր ամուսնանալ. նրա կնոջը անվանում են տերտերակին, իրիցկին, տիրուհի, տիրօխնի, տըրխուրի, գիրակէն: Քաճանա տերմինից կազմված են քաճանայություն, քաճանայել, քաճանայապետ, քաճանայապետել, չքաճանա, չքաճանայապետ, քաճանայարան բարդ, ածանցավոր բառերն ու բայաձևերը: Քաճանա տերմինից կազմված քաճանայապետ տերմինը գործածվում է ոչ միայն որպես քաճանաների դասի գլուխը, այլև տրվում է Քրիստոսին՝ իբրև գլուխ եկեղեցու: «Ամեն կրօնական իրաց գլուխ էր քաճանայապետը, և էր սովորական դատաւոր կրօնից վերաբերեալ ամէն տեսակ վէճի, նաև ընդհանուր արդարութեան և դատաստանաց Հրէից ազգին, իբրև գլուխ համօրէն քաճանայից որոյ յանձն էր դատաւորութեան պաշտօնը: Քաճանայապետը միայն ունէր արտօնութիւն մտնել սրբարանը մի անգամ ի տարւոջ, քաւութեան մեծ օրը, քաւութիւն ընել բոլոր ժողովրդեան մեղաց համար»¹⁷: Քաճանա անվանումը տրվում է նաև ինքնագլուխ եկեղեցիների ծայրագույն հոգևոր պետին՝ Հոռմի պապերին, հունաց պատրիարքներին, հայոց կաթողիկոսներին, թեև հիմա այս նշանակութեամբ ավելի շատ գործածվում է հովվապետ տերմինը: Քաճանա բառի իմաստով գործածվում է երեց բառը, որը գրաբարում ուներ և՛ ածականական, և՛ գոյականական նշանակություն: Օրինակ՝ «Այսմ հաւանեալ երանելին Տրդատ՝ տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգորիոս, զե-

¹⁴ Եզնկայ Կողբացույ Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826, էջ 230:

¹⁵ Նույն տեղում, էջ 278:

¹⁶ ՀԲԲ, հ. 4:

¹⁷ ԲՄԳ, էջ 563:

րէց որդին Վրթանիսի»¹⁸ (այստեղ երեց բառն ունի ածականական կիրառութիւն): «Ժողովեցան Բիտոն և Բիկենդ երիցունք ի Հոռոմ քաղաքէ»¹⁹ (այստեղ երեց բառն ունի գոյականական կիրառութիւն):

Ըստ Ս. Մալխասյանցի՝ երեց բառի առաջին նշանակութիւնը ածականական է՝ «տարիքով ավելի մեծ», որպէս եկեղեցական տերմին՝ նշանակում է «Քրիստոնեական համայնքի ավագը, քահանա»: Ըստ նույն բառարանի տվյալների՝ «...ավելի շատ ժողովրդական բառ է գյուղի քահանաների նկատմամբ»²⁰:

Հովհանու Հայտնության մեջ գրված է. «Եւ քահանայք շուրջ զաթոռովն նմանք տեսեան զմրիտի, եւ շուրջ զաթոռովն աթոռք քսան եւ չորք, եւ ի վերայ աթոռոցն նստէին քսան եւ չորք երիցունք՝ զգեցեալ հանգերձս սպիտակս, եւ ի դլուխս իւրեանց պսակս ոսկեղէնս» (Հայտնութիւն, Դ, 4, 5): Հովհաննես Ավետարանիչը տարբերակում է քահանա և երեց բառերը: Երեց բառը բնիկ է, ծագում է հ.-ե. preisik'hu ձևից «նախնիք, ավագանի, երիցագույն, ծերագույն» նշանակութիւններով²¹: Հանդես է գալիս էրէց, իրից տարբերակներով: Բառի առաջնային նշանակութիւնը կապված է «մեծ, անդրանիկ» իմաստի հետ, իսկ «քահանա» նշանակութիւնը՝ քրիստոնեութեան հետ: Ունենք երիցապետ, երիցանի (տերտերներ), երիցապետ, երիցուկ, Հայերեց, ավագերեց, ձեռներեց, գեղջերեց, գահերեց, երիցեղբայր և այլն: Հայերենում ավանդված է նաև արքերէց «ավագ քահանա» բառը՝ ավանդված XII դ.: Փափստոս Բուզանդը ունի չերէց բառը, որը գործածված է Մրջունիկ անունով երեցի համար, որ Փառանձեմ թագուհու գործամար Ողոմպի տիկնոջը տվեց մահաբեր հաղորդութիւնը և սպանեց. «...եւ յանօրէնն Փառանձեմայն պարզև առեալ չերիցուն զգեղն՝ ուստի իսկ ինքն էր»²²:

Շուշտակ բառը գործածվում է այրիանալուց հետո կուսակրոն գարձած հոգևորականի համար: Շուշտակ նշանակում է՝ 1. Լաթ, որով կանայք կապում են իրենց գլուխները կամ կանացի գլխարկ: 2. Փոխաբերաբար գործածվում է թեթևամիտ կանանց համար: Շուշտակ բառի այս իմաստը կասկածվում է կամ շուշտել բայի հետ, որ նշանակում է տարակուսել, կամ շուշտակ-ի թեթևամիտ կին նշանակութիւնից, իբրև կասկածելի հոգևորական:

Աբեղա բառը փոխառութիւն է ասորերեն abila ձևից, որ նշանակում էր «տխուր, տրտում»²³: Աբեղաները կուսակրոն կրոնավորներն են. առանձին օրհնութեամբ կարող են ստանալ վարդապետի աստիճան: Բարբառներում հանդես է գալիս հետևյալ հնչյունական զուգաբանութիւններով՝ աբէղա (կարին), ապեղա (Սալմաստ), ափիղա (Թբիլիսի), ռպէղա, հռպէղա (Մարաշ): Վատ աբեղա իմաստով հարմարեցված մի ձև է իսաբեղա ձևը (իբր իսաբող աբեղա), ինչպէս՝ չքահանա, չաստված:

¹⁸ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 259:

¹⁹ Նույն տեղում, էջ 239:

²⁰ ՀԲԲ, հ. 1:

²¹ ՀԱԲ, հ. 2:

²² Բ ու գ ա ն դ, էջ 105:

²³ ՀԱԲ, հ. 1:

Վարդապետը փոխառութիւնն է պահպանելով *varda* (գործ, աշխատանք) և *pati* (պետ) բառից, որ լինում է *vardapati*²⁴: Ըստ Մալխասյանցի՝ 1. Աշակերտապետ, վարժապետ: 2. Ուսուցիչ: 3. Կրօնական գիտական աստիճան, որ տալիս են հոգևորականին առանձին օրհնությամբ և վարդապետական գավազանով:

Վարդապետ բառը, իբրև կրօնական տերմին, կա բոլոր բարբառներում՝ վարդաբեդ (*Մուշ*), վարժապետ (*Երևան*), վառթապետ (*Ագուլիս*), վարժապիտ (*Թբիլիսի*), վարդաբեդ (*Սվեգիա*), վարժըբեդ (*Ասլանբեկ*), վարժապետ (*Վան*), վրթաբեդ (*Ղարաբաղ*), վալ դաբեդ, վարդաբեդ (*Ջեյթուն*): Սրանք բարբառներին անցել են եկեղեցական լեզվից: Հայերենից փոխառյալ է վրացերեն «վարժապետի» ձևը, որ նշանակում է «հայ վարդապետ»: Նոր Կտակարանում վարդապետ բառն ավելի շուտ ունի ուսուցիչ նշանակութիւնը. հետագայում այն ստացել է կրօնական աստիճանի իմաստը: Օրինակ՝ «Եւ երեք օր յետոյ նրան գտան տաճարում. վարդապետների հետ նստած նա լսում էր նրանց ու հարցեր տալիս» (*Ղուկ. Բ, 46*):

Եպիսկոպոս (գրված նաև եպիսկապոս, եպիսկովպոս) բառն արձանագրված է *V* դ., փոխառութիւնն է հունարեն *ἐπίσκοπος* ձևից: Բուն նշանակութիւնն է «տեսուչ, վերատեսուչ»: Հունարեն բառը կազմված է *ἐπί* (վրա) և *σκοπεο* «գիտել» բառերից: Հայերեն թարգմանվել է վերադիտող, մակադիտող²⁵: Ունենք եպիսկոպոսութիւն, եպիսկոպոսանոց, եպիսկոպոսապետ, յառաջեպիսկոպոս, չեպիսկոպոս: Օրինակ՝ «Զեպիսկոպոս որք ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն չեպիսկոպոսքն»²⁶, «...եւ յամենայն քաղաքս արիանոսս չեպիսկոպոսս յղէր»²⁷: Այս արմատից են կազմված արքեպիսկոպոս և քորեպիսկոպոս բառերը: Երկուսն էլ փոխառութիւն են հունարենից: Արքեպիսկոպոսը նշանակում է՝ 1. Եպիսկոպոսների ավագը, 2. Ներկայումս՝ առանձին պատվի աստիճան, որ կաթողիկոսը շնորհում է եպիսկոպոսներին, մանավանդ նրանց, ովքեր թեմի առաջնորդ են դառնում:

Քորեպիսկոպոս (հուն. *Xorepiskopos*-գավառական վերատեսուչ) նշանակում է թեմի եպիսկոպոսին ստորադրյալ՝ գավառի եպիսկոպոս կամ այլ հոգևոր պաշտոնյա, իբրև թեմական եպիսկոպոսի փոխանորդ, գործակալ: Քորեպիսկոպոս, փոխառաջնորդ, որից քորեպիսկոպոսարան, քորեպիսկոպոսաջոկ: Փոխառութիւնն է հունարեն *χωρεπίσκοπος* «գավառական եպիսկոպոս» բառից: Օրինակ՝ «Քորեպիսկոպոս ոք չարար»²⁸:

Արքեպիսկոպոս բառը, ըստ Մալխասյանցի, նշանակում է՝ 1. Եկեղեցական եպիսկոպոսների պետը՝ ավագը: 2. Ներկայումս՝ առանձին պատվի աստիճան, որ կաթողիկոսը շնորհում է եպիսկոպոսներին, մանավանդ նրանց, որոնք թեմի առաջնորդ են դառնում: Ըստ Հ. Աճառյանի՝ արքեպիսկոպոս բառը նշանակում է՝ «մեծ և գլխավոր եպիսկոպոս», հետևաբար ասվում է նաև արհիեպիսկոպոս, արչիեպիսկոպոս, եպիսկոպոս արհի, եպիս-

²⁴ ՀԱԲ, հ. 4:

²⁵ ՀԱԲ, հ. 2:

²⁶ Փ. Բ ու զ ա ն դ ա ց ւ ո յ..., էջ 83:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Ղազարայ Փարպեղոյ Թողթ առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 193:

կոպոս արչի, կրճատմամբ՝ արհի: Այս բառը փոխառություն է անցել է շատ լեզուների:

Կաթողիկոս տերմինը ևս ավանդված է V դ.: Հանդիպում է կաթաղիկոս, կաթուղիկոս ուղղափառական տարբերակներով: Փոխառություն է հունարեն καθολικός բառից, որն ունի հետևյալ նշանակությունները՝ 1. (կրոն.) Ընդհանրական պետ եկեղեցու, ծայրագույն պատրիարք, եպիսկոպոսապետ, քահանայապետ, պապ: 2. Արևելյան մի քանի ինքնագլուխ եկեղեցիների հոգևոր պետերի տիրոջ²⁹: Ունենք կաթողիկոսական, կաթողիկոսանալ, կաթողիկոսարան, կաթողիկոսացու, կաթողիկոսացու, կաթողիկոսություն բառերը. «...հրամայեաց Վռամ առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշարէ, և անդէն արգելուլ զնա, և զամենայն ինչս ազգի նորա ունել յարքունիս. նոյնպէս և զմեծն Սահակ, և զտունն կաթողիկոսական ունել յարքունիս»³⁰:

Այսպիսով, հայ եկեղեցու նվիրապետությանը վերաբերող տերմինների ծագումնային, բառակազմական-իմաստաբանական, ինչպես նաև գործածության տարածվածության պարզաբանման նպատակով կատարված սույն վերլուծությունից պարզվում է, որ դրանք հիմնականում փոխառություններ են այն լեզուներից, որոնց հետ հայերենն ունեցել է մշակութային, կրոնաեկեղեցական շփումներ, և դրանք գործածական են V դ. մինչև մեր օրերը՝ կազմելով հայերենի բառապաշարի անկապտելի մի մասը:

О НЕКОТОРЫХ ТЕРМИНАХ, КАСАЮЩИХСЯ ИЕРАРХИИ ЧИНОВ ДУХОВНЫХ СЛУЖИТЕЛЕЙ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

СИЛЬВА ПАПИКЯН

Резюме

Иерархия чинов духовных служителей армянской церкви классифицируется следующим образом: причетник, диакон, священник (иеромонах), епископ, архиепископ, патриарх, католикос. Вышеупомянутые термины заимствованы из греческого, персидского или сирийского, то есть из тех языков, с которыми армянский язык имел культурные, религиозно-церковные общения. Эти термины употребляются с V века до сих пор, составляя неотъемлемую часть лексики армянского языка.

²⁹ ՀԲԲ, հ. 2:

³⁰ Մովսիսի Խորենացու..., էջ 349: